Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 392-Ա որոշման

«ԽՄԵԼՈՒ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	**Ծրագրի նպատակը**	Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց ձորի, Կոտայքի մարզերի բնակավայրերում խմելու և ոռոգման ջրի համակարգերի վերանորոգում և վերակառուցում՝ բարելավելու շահառուների սոցիալ-տնտեսական պայմանները:
2.	**Ծրագրի բարեգործական որակման նպատակը**	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	**Բարեգործը**	1) «Շէն-Ֆրանսիա» բարեգործական կազմակերպություն (հասցե՝ 24 րյու դը Մոբյուժ, 75009, Փարիզ, Ֆրանսիա). 2) Հաց աշխարհին - Գերմանիայի Եկեղեցիների ընկերակցություն (հասցե՝ Կարոլին Միշլեզ փողոց 1, 10115, Բեռլին, Գերմանիա). 3) Շվեյցարիայի Միջեկեղեցական աջակցություն (ՀԷԿՍ-ԷՊԵՌ) (հասցե՝ Սեմինարշտրասսե 28, 8042 Ցյուրիխ, Շվեյցարիա). 4) «Յալկեզյան հիմնադրամ» (հասցե՝ 1005 Էլջին ստթրիթ Ուեսթ, Սուիթ 200, Քոբուրգ, Օնտարիո, Կանադա). 5) «Կոկա-կոլա» հիմնադրամ (Կոկա-կոլա պլազա 1, Նորթ Ուեսթ, Ատլանտա, Ջորջիա, 30313):
4.	**Ծրագիրը կատարողը**	«Շեն» բարեգործական հասարակական կազմակերպություն (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Նալբանդյան 110, ՀՎՀՀ՝ 01503283):
5.	**Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը**	Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց ձորի, Կոտայքի մարզերի բնակավայրեր, բնագավառը՝ ջրամատակարարում:

6.	**Ծրագրի բյուջեն**	229,449,000 դրամ:
7.	**Բարեգործություն ստացողը**	Ծրագրի շահառուներն են Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց ձորի, Կոտայքի մարզերի համայնքները: Բնակավայրերը, որտեղ կիրագործվեն խմելու և ոռոգման ջրի համակարգերի բարելավման ծրագրեր, կընտրվեն «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության ուսումնասիրությունների միջոցով՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ բաժնի 3.3-րդ գլուխը:
8.	**Ծրագրի իրականացման տևողությունը**	2024 թվականի փետրվարի 1-ից մինչև 2028 թվականի դեկտեմբերի 31-ը
9.	**Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը**	1) Խմելու և ոռոգման ջրերի համակարգերի վերանորոգում և վերակառուցում՝ 97,778,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2024 թվականի փետրվարի 1-ից մինչև 2028 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում. 2) Շինմոնտաժային տեխնիկայի, շինանյութերի, պոլիէթիլենային և մետաղական խողովակների, խողովակի միացման մասերի, դիտահորերի, բաժանարարների ու փականների ձեռքբերում կամ ներմուծում՝ 131,671,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2024 թվականի փետրվարի 1-ից մինչև 2028 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում: Ծրագրի շրջանակներում ձեռք բերված շինմոնտաժային տեխնիկան հետագայում կօգտագործվի նոր բարեգործական ծրագրեր իրականացնելու նպատակով:
10.	**Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը**	1) Խմելու և ոռոգման ջրերի համակարգերի վերանորոգման և վերակառուցման աշխատանքների իրականացում՝ 97,778,000 դրամ արժողությամբ. 2) Շինմոնտաժային տեխնիկայի, շինանյութերի, պոլիէթիլենային և մետաղական խողովակների, դիտահորերի, խողովակի միացման մասերի, բաժանարարների ու փականների ձեռքբերում կամ ներմուծում՝ 131,671,000 դրամ արժողությամբ:

11.	**Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը**	Նախատեսված չեն:
12.	**Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ**	Համագործակցությունը նախատեսված է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ինչպես նաև նշված մարզերի տեղական ինքնակառավարման մարմինների հետ:
13.	**Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը**	Համաձայն պայմանագրերում նշված ժամկետների՝ շնորհատու կազմակերպությունները կիրականացնեն ծրագրերի անկախ վերահսկում: Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով բարեգործության ոլորտը համակարգող լիազորված մարմնին կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

02.07.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ